Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց

4 փետրվարի 2016 թվականի N 4

27. ԴԵՊԻ ԾՈՎ ԵԼՔ ՉՈՒՆԵՑՈՂ ԶԱՐԳԱՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻԵՆՆԱՅԻ 2014-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՑ ՈՒ ԴՐԱ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

1. Հավանություն տալ՝

1) Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների վերաբերյալ Վիեննայի 2014-2024 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման Հայաստանի Հանրապետության ազգային ծրագրին՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների վերաբերյալ Վիեննայի 2014-2024 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման Հայաստանի Հանրապետության ազգային ծրագրից և դրա նպատակներից բխող այլ միջոցառումների իրագործման ժամանակացույցին՝ համաձայն N 2 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. փետրվարի 5
Երևան

4-27ardz.voroshum

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2016 թ.
փետրվարի 4-ի նիստի N 4
արձանագրային որոշման

ԴԵՊԻ ԾՈՎ ԵԼՔ ՉՈՒՆԵՑՈՂ ԶԱՐԳԱՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻԵՆՆԱՅԻ 2014-2024 **ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՓԵՏՐՎԱՐ 2016**Թ**.
ԵՐԵՎԱՆ

Ներածություն

Հարավկովկասյան տարածաշրջանում Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքը և քաղաքական, տնտեսական, սոցիալական, բնապահպանական և ինքնահատուկ մի ամբողջ շարք այլ գործոնների համակցությունը որոշակիորեն նախապայմանավորում են աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական հոլովույթներում երկրի դերակատարության և զարգացման առանձնահատկությունները:

1994 թվականից, երբ ՄԱԿ-ի շրջանակներում ստեղծվեց Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների խումբը (Landlocked Developing Countries Group – LLDCs), Հայաստանի Հանրապետությունն ակտիվորեն ներգրավվեց դրա շրջանակներում ընթացող միջազգային գործընթացներին՝ ելնելով այն իրողությունից, որ համաշխարհային լիարժեք տնտեսական ինտեգրումը և կայուն զարգացումը հնարավոր է ապահովել միայն միջազգային համագործակցության և ջանքերի համակարգման ու համախմբման միջոցով:

Քաղաքակրթությունների խաչմերուկում և հյուսիս-հարավ ու արևելք-արևմուտք միջազգային տրանսպորտային կարևոր մայրուղիների հանգուցակետում գտնվող Հայաստանի Հանրապետությունը բացառիկ տեղ է գրավում մինչև իսկ առանձնահատուկ կարիքների տարաբնույթ բնութագրիչներով հատկանշվող՝ Դեպի ծով ելք չունեցող զարգացող 32 այլ՝ ընդհանուր առմամբ շուրջ 440 միլիոն բնակչություն ունեցող երկրների շարքում՝ համաշխարհային շուկաներից հեռավորության և դժվար հասանելիության, տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման համար անբարենպաստ լեռնային կտրտված լանդշաֆտի, ընդգծված ցամաքային կլիմայի, սահմանափակ բնական ռեսուրսների, հարևան չորս երկրներից երկուսի հետ փակ սահմանների և, հետևաբար, շրջափակման առկայության, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորված չլինելու և բազմաթիվ այլ հանգամանքների ու գործոնների նկատառմամբ:

Այս առումով, Հայաստանի Հանրապետության կառավարության առաջնահերթությունն է միջազգային առևտուրը, գործարար և ներդրումային միջավայրը, հարկային և մաքսային բնագավառները կարգավորող օրենսդրության մշտական կատարելագործումը և բարեփոխումները, արդյունավետ կառավարման և ֆինանսական լուրջ ներդրումների շարունակական հոսքերի ապահովումը: Միաժամանակ, ՀՀ կառավարությունը մշտապես կարևոր ուղղություն է համարել արտահանվող ապրանքատեսականու միջազգային մրցունակության բարձրացումը, ներկրումների և արտահանումների հարաբերակցության փոփոխումը՝ հօգուտ արտահանումների ծավալային և որակական աճի, բեռնափոխադրումային ծախսերի կրճատումը և որպես հետևանք՝ թե ներկրվող, և թե արտահանվող ապրանքների ինքնարժեքի նվազումը:

Նշված առաջնահերթությունները միջազգային գործընթացներին համահունչ դարձնելու տեսակետից էական առաջընթաց արձանագրվեց հատկապես Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների Ալմաթիի Գործողությունների ծրագրի իրականացման տասնամյա ժամանակահատվածում՝ 2003-2013թթ.: Այս ծրագրի տրամաբանական շարունակությունը հանդիսացավ Վիեննայի 2014-2024թթ. Գործողությունների ծրագիրը (ԳԾ):

Վիեննայի գործողությունների ծրագիրը, ելնելով դրանում բարձրացված հարցերի կարևորությունից, լայնորեն դիտարկվում է միջազգային հարաբերություններում ընթացող զարգացման ընդհանուր գործընթացների համատեքստում: Մասնավորապես ԳԾ-ը ներառվել է կայուն զարգացման նոր համաշխարհային օրակարգի (ետ-2015 օրակարգ), օրակարգի ամփոփիչ փաստաթղթի, ինչպես նաև օրակարգի անբաժան մաս կազմող Զարգացմանն ուղղված ֆինանսավորման երրորդ միջազգային համաժողովի եզրափակիչ փաստաթղթի մեջ: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ԳԾ-ի արդյունավետ իրականացումը խրախուսելու նպատակով իր 69-րդ և 70-րդ նստաշրջանների ժամանակ ընդունել են 69/137, 69/232 և 70/2 բանաձևերը:

ԳԾ-ի արդյունավետ կատարմանն է ուղղված Հայաստանի Հանրապետության կողմից ձեռնարկվելիք և իրականացվելիք միջոցառումների սույն ազգային ծրագիրը:

1. **Հայաստանի Հանրապետության կողմից Ալմաթիի Գործողությունների ծրագրի կատարման համառոտ ամփոփում և գնահատական**

Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրներին առնչվող միջազգային գործընթացներում Հայաստանի ակտիվության առավել գործնական փուլը սկսվում է Ալմաթիի նախարարական համաժողովով, որը կայացավ 2003թ. օգոստոսի 28-29-ը՝ Դեպի ծով ելք չունեցող ու տարանցիկ զարգացող երկրների, դոնոր երկրների, միջազգային ֆինանսական և զարգացման հաստատությունների պատվիրակությունների ու ներկայացուցիչների մասնակցությամբ: Համաժողովն առաջին միջազգային հարթակն էր, ուր անդրադարձ եղավ այդ երկրներին առնչվող ինքնահատուկ հիմնախնդիրներին:

Համաժողովի, ինչպես նաև համաժողովի միջկառավարական նախապատրաստական կոմիտեի երկրորդ հանդիպման աշխատանքների ընթացքում ՀՀ պատվիրակության կողմից բարձրացված հարցերի շարքում էին Ադրբեջանի և Թուրքիայի կողմից իրականացվող շրջափակման բացասական հետևանքները, նոր նավթային խողովակաշարերի և գազատարերի կառուցման ժամանակ ամենակարճ երթուղիների և գնային առումով առավել նպաստավոր սկզբունքների կիրառման, տարածաշրջանային ինտեգրման անհրաժեշտությունը:

Ալմաթիի համաժողովի ընթացքում քննարկումների արդյունքում արված առաջարկների հիման վրա համաժողովին մասնակցած կառավարության ներկայացուցիչների կողմից ընդունվեց Ալմաթիի հռչակագիրը և Ալմաթիի Գործողությունների ծրագիրը, որը հանդիսանում է առաջին միջազգային փաստաթուղթը, որտեղ ոչ միայն առաջին անգամ ճանաչվում են Դեպի ծով ելք չունեցող զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների հատուկ կարիքներն ու դժվարությունները, այլև ներկայացվում են կոնկրետ միջոցառումներ և հատուկ թիրախային ծրագրեր՝ այդ երկրների իրավիճակը բարելավելու համար: Գործողությունների ծրագրի նպատակն էր նպաստել համագործակցությանը և սկիզբ դնել գործընկերության՝ ուղղված ծովի ելք չունեցող զարգացող երկրների առջև համաշխարհային շուկաներից մեկուսացման կամ հեռավորության պատճառով ծառացած տնտեսական մարտահրավերները հաղթահարելուն:

Փաստաթղթում շեշտվում էր տարանցիկ հարևան երկրների հետ համագործակցության զարգացման անհրաժեշտությունը, առանձնահատուկ ուշադրություն դարձվում իրականացվելիք առաջնահերթ խնդիրներին, այն է՝ տրանսպորտային միասնական քաղաքականության վարում, ենթակառուցվածքների (երկաթուղի, ավտոտրանսպորտ, նավահանգիստներ, ներքին ջրային ուղիներ, խողովակաշարեր, օդային տրանսպորտ, հեռահաղորդակցություն) զարգացում, միջազգային առևտուր և առևտրի դյուրացում, միջազգային աջակցության ցուցաբերում և նշված ոլորտներում համագործակցության արդյունքների պարբերաբար քննարկում, հետագա գործողությունների ծրագրավորում:

2003-2013թթ. տասնամյա ժամանակահատվածում Հայաստանն ակտիվորեն ներգրավվել է Ալմաթիի Գործողությունների ծրագրի իրականացման գործընթացներում՝ մասնակցելով դրանց շրջանակներում առաջ քաշված տարածաշրջանային նախաձեռնություններին, անցկացված նշանակալի միջոցառումներին, այդ թվում նախարարական և այլ մակարդակի հանդիպումներին /2007թ. հունիսի 18-21, Ուագադուգու, 2008թ. ապրիլի 22-23, Բանգկոկ, 2008թ. հոկտեմբերի 2-3, Նյու-Յորք, 2011թ. ապրիլի 12-14, Ուլան-Բատոր, 2012թ. սեպտեմբեր, Նյու Յորք, 2014թ. հուլիս, սեպտեմբեր և հոկտեմբեր, Նյու Յորք, և այլն/, ներառելով նաև ՄԱԿ-ի Ասիական և խաղաղօվկիանոսյան երկրների տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողովի (UN ESCAP) հարթակը:

Նշված ժամանակամիջոցում Հայաստանի Հանրապետությունը նաև մասնակցել է Դեպի ծով ելք չունեցող երկրներին վերաբերող փաստաթղթերի մշակմանը և ընդունմանը: 2011թ. հոկտեմբերի 28-ին Հայաստանը ստորագրել և 2012թ. սեպտեմբերի 11-ին վավերացրել է «Դեպի ծով ելք չունեցող երկրների համար միջազգային գիտահետազոտական կենտրոն ստեղծելու մասին» բազմակողմ համաձայնագիրը, 2013թ. հունիսի 23-ին Հայաստանը միացել է «Դեպի ծով ելք չունեցող պետությունների տարանցիկ առևտրի մասին» 1965թ. Կոնվենցիային, որին ՀՀ-ի անդամակցությունը տնտեսական և քաղաքական հատուկ կարևորություն ունի,

քանի որ հնարավորություն է ընձեռում միջազգային իրավունքի հիման վրա պաշտպանելու երկրի շահերը երրորդ երկրների տարածքով ազատ տարանցման ոլորտում, ինչպես նաև առավել հիմնավոր և հետևողական կերպով միջազգային ատյաններում բարձրացնել Հայաստանի ապաշրջափակման հարցը: 2013 թվականի փետրվարի 27-ին Հայաստանը վավերացրել է 1921 թվականի ապրիլի 20-ին ստորագրված «Տարանցման ազատության մասին» Կոնվենցիան և Կանոնադրությունը:

2008թ. հոկտեմբերի 21-23-ը Հայաստան է այցելել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ, թերի զարգացած, դեպի ծով ելք չունեցող և փոքր կղզի զարգացող երկրների հարցերով բարձր ներկայացուցիչ Շեյք Սիդի Դիարան (Cheick Sidi Diarra), ում հետ բարձրաստիճան հանդիպումների ընթացքում քննարկվել են նաև Դեպի ծով ելք չունեցող երկրների՝ արտաքին աշխարհի հետ կայուն հաղորդակցության ապահովման, տարածաշրջանային համագործակցության հետ կապված հարցերը:

2014թ. Հայաստանը ներկայացրել է Ալմաթիի գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ Ազգային զեկույց:

Ալմաթիի Գործողությունների ծրագրի կատարման ավարտին, 2014թ. ընթացքում, Հայաստանն ակտիվորեն մասնակցել է Դեպի ծով ելք չունեցող երկրների վերաբերյալ Վիեննայի համաժողովի նախապատրաստական աշխատանքներին և միջոցառումներին:

2. **Հայաստանի մասնակցությունը Դեպի ծով ելք չունեցող երկրների վերաբերյալ Վիեննայի համաժողովին և Վիեննայի Հռչակագրի ու** 2014-2024**թթ**. **Գործողությունների ծրագրի** (**ԳԾ**) **ընդունմանը հաջորդած քայլերը**

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2011թ. դեկտեմբերի 22-ի, թիվ 66/214 և 2012թ. ապրիլի 3-ի թիվ 67/222 բանաձևերի համաձայն, որոշում կայացվեց 2014թ. նոյեմբերի 3-5-ը անցկացնել Ալմաթիի գործողությունների ծրագրի իրականացմանն ուղղված 10 տարվա վերանայման երկրորդ բարձրաստիճան՝ ամփոփիչ համաժողովը՝ նպատակ ունենալով անդրադառնալ դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների կարիքներին: Համաժողովն անցկացվեց 2014 թվականի նոյեմբերին Վիեննայում: Համաժողովի մասնակիցներն էին Դեպի ծով ելք չունեցող երկրների կառավարությունների բարձրաստիճան պաշտոնատարները, զարգացող տարանցիկ, ինչպես նաև դոնոր երկրների պատվիրակները, ՄԱԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների, միջազգային ֆինանսավարկային հաստատությունների, ինչպես նաև մասնավոր սեկտորի ներկայացուցիչները: Համաժողովի նպատակն էր ամփոփել 2003թ. Ալմաթիում ընդունված Գործողությունների ծրագրի իրականացումը, ընդհանուր քննարկումների միջոցով

ուրվագծել միջազգային առևտրի և տարանցիկ փոխադրումների ոլորտների արդյունավետ միջազգային և տարածաշրջանային ռազմավարությունները, վերահաստատել միջազգային հանրության հանձնառությունը՝ օժանդակելու դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրներին՝ դիմագրավելու տնտեսական զարգացման համար խոչընդոտ հանդիսացող մարտահրավերները, ինչպես նաև նախագծել հաջորդ տասնամյակի համար դեպի ծով ելք չունեցող երկրների զարգացման նոր ծրագիրը:

ՀՀ պատվիրակությունը Համաժողովի լիագումար նիստի ընթացքում, մասնավորապես, անդրադարձավ Հայաստանի՝ աշխարհագրորեն դեպի ծով ելք չունեցող երկրի տնտեսական կայուն զարգացման համար առկա առանձնահատկություններին և տարածաշրջանային համագործակցության մարտահրավերներին, ներկայացվեցին ՀՀ կառավարության կողմից իրականացվող զարգացման և ներդրումային ծրագրերը, տրանսպորտային ենթակառուցվածքների բարեփոխումները, ինչպես նաև ՀՀ կողմից տնտեսական բազմակողմ տարածաշրջանային և միջազգային համագործակցության ձևաչափերին մասնակցությունը:

Համաժողովի շրջանակներում ՀՀ պատվիրակությունը մասնակցեց բարձրաստիճան թեմատիկ քննարկումներին, գործարար ներդրումային համաժողովին և մի շարք այլ զուգահեռ միջոցառումների:

Համաժողովի ավարտին անդամ պետությունների կողմից ընդունվեց Վիեննայի հռչակագիրը և 2014-2024 տասնամյակի Վիեննայի Գործողությունների ծրագիրը, որում հաստատվեցին դեպի ծով ելք չունեցող զարգացող 32 երկրների տնտեսական կայուն զարգացման թիրախները և դրանց իրագործման հիմնական մարտահրավերներն ու առաջնայնությունները:

2015թ. մայիսին ՀՀ ԱԳՆ ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների հետ համատեղ պատրաստեց և ՄԱԿ-ի դեպի ծով ելք չունեցող երկրների հարցերով Բարձր հանձնակատարի գրասենյակ փոխանցեց Վիեննայի 2014-2024թթ. Գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն: 2015թ. ՀՀ վարչապետի որոշմամբ, ՀՀ ԱԳՆ համակարգմամբ ստեղծվեց աշխատանքային խումբ՝ Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների վերաբերյալ Վիեննայի 2014-2024թթ. Գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ազգային ծրագրի մշակման կազմակերպչական աշխատանքների իրականացումն ապահովելու նպատակով: Աշխատանքային խմբում ընդգրկված են ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների, էկոնոմիկայի, տրանսպորտի և կապի, էներգետիկայի և բնական պաշարների, ֆինանսների նախարարությունների և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմերի լիազորված ներկայացուցիչներ:

3. **Դեպի ծով ելք չունեցող երկրների վերաբերյալ Վիեննայի** 2014-2024**թթ**. **Գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման Հայաստանի Հանրապետության Ազգային ծրագրի կատարման իրավական հիմքերը**

Դեպի ծով ելք չունեցող երկրների վերաբերյալ Վիեննայի 2014-2024թթ. Գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման Հայաստանի Հանրապետության Ազգային ծրագրի կատարման իրավական հիմքեր են հանդիսանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, համապատասխան միջազգային պայմանագրերը, տնտեսական ոլորտին վերաբերող օրենքները և այլ իրավական ակտերը, մասնավորապես՝ «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը, Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. Ռազմավարական զարգացման ծրագիրը, 2011թ. դեկտեմբերի 15-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված՝ Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը և 2015թ. հոկտեմբերի 1-ին ընդունված՝ Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018թթ. Ռազմավարությունը, գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2015թ. ծրագիրը, ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգը և իրավական այլ փաստաթղթեր ու գործիքներ:

4. **Դեպի ծով ելք չունեցող երկրների վերաբերյալ Վիեննայի** 2014-2024**թթ**. **Գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման Հայաստանի Հանրապետության Ազգային ծրագրի կատարման ֆինանսական աղբյուրներ և միջոցներ**

Դեպի ծով ելք չունեցող երկրների վերաբերյալ Վիեննայի 2014-2024թթ. Գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման Հայաստանի Հանրապետության Ազգային ծրագրի կատարման ֆինանսական հիմնական աղբյուրը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն է: Լրացուցիչ աղբյուրներ կարող են լինել միջազգային ֆինանսական հաստատություններից, տարբեր դոնորներից, վարկային և այլ կազմակերպություններից ստացված վարկերը, դրամաշնորհները և տեխնիկական ու խորհրդատվական աջակցությունը:

5. **Հայաստանի Հանրապետության մինչև** 2024**թ**. **ազգային զարգացման գործընթաց**, **տնտեսական զարգացման առաջնահերթությունները**. **հիմնական միտումներ**, **նպատակներ և խնդիրներ**

Առաջնահերթություն 1. **Տարանցման քաղաքականության հիմնարար խնդիրներ**

Հայաստանի Հանրապետությունը քաղաքաաշխարհագրական և տնտեսաաշխարհագրական դիրքի առանձնահատկություններից ելնելով գտնվում է կարևոր միջազգային տրանսպորտային ուղիների՝ Եվրոպան Կենտրոնական և Հարավային Ասիային և Ռուսաստանի Դաշնությունը Մերձավոր Արևելքին կապող խաչմերուկում, ուստի Հայաստանով են անցնում Հարավարևելյան Ասիան և Կենտրոնական Ասիան Եվրոպային միացնող ցամաքային ճանապարհները:

Գտնվելով արևմտյան (եվրոպական), արևելյան (իսլամական) և սլավոնական քաղաքակրթությունների փոխազդեցության գոտում և աշխարհի բարձր զարգացած երկրներից և հզոր տնտեսական կենտրոններից հեռու՝ Հայաստանի տնտեսությունը կախված է տրանսպորտից և միջսահմանային հասանելիությունից:

Սակայն, լինելով դեպի ծով ելք չունեցող երկիր, Հայաստանի դիրքը լուրջ խնդիր է հանդիսանում տրանսպորտի ցանցի զարգացման համար, որը պայմանավորված է նաև աշխարհագրական դիրքի և լեռնային մակերևույթի առանձնահատկություններով:

Երկրի տնտեսական ակտիվությունը սահմանափակվում է նաև պայմանավորված Հայաստանի խիստ մայրցամաքային կլիմայական պայմաններով, ինչն էլ ավելի արդիական է դառնում կլիմայական փոփոխությունների համատեքստում:

Տարանցման քաղաքականության մեջ հիմնական խոչընդոտներից է մնում Հայաստանի Հանրապետության պետական սահմաններից երկուսի փակ լինելը՝ արևելքից Ադրբեջանի (1991 թվականից) և արևմուտքից Թուրքիայի հետ (1993 թվականից): Թուրքիայի և Ադրբեջանի կողմից շրջափակումը բացասական ազդեցություն է թողնում երկրի կայուն տնտեսական զարգացման, բնակչության կենսամակարդակի վրա: Նման պայմաններում տրանսպորտային հաղորդակցության ներկայիս վիճակը ուղեկցվում է ջերմոցային գազերի բարձր արտանետումներով, որն իր հերթին խոչընդոտում է օպտիմալ տարատեսականացմամբ ցածրածխածնային (ջերմոցային գազերի առավել ցածր արտանետումներով) տնտեսական զարգացմանը: Շրջափակման պատճառով չկա Արևմուտքից Արևելք և հակառակ ուղղությամբ տարանցիկ փոխադրումների հնարավորություն և բեռնափոխադրումներ իրականացնելու միջոցներ են հանդիսանում երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհները՝ մինչև վրացական Փոթի և Բաթումի նավահանգիստներ, որտեղից հնարավոր է կատարել լաստանավային բեռնափոխադրումներ:

Այս խնդիրները հանգեցնում են տրանսպորտային փոխադրումների բարձր գների, մասնավորապես վաճառվող ապրանքների և ենթակառուցվածքների թանկ զարգացման ու պահպանման համար:

Այնուհանդերձ, ներքին պահանջարկի մեծացումը և Վրաստանի միջոցով առևտրային կապերի վերականգնումը Եվրոպայի ու Ռուսաստանի հետ խթանել են տնտեսական աճին. այս երթուղու համար հիմնական ուղիները ապահովում են Սևծովյան նավահանգիստները:

Ուստի Հայաստանի Հանրապետությունը իր ամբողջ ներուժն օգտագործում է Հյուսիսի և Հարավի ուղղությամբ:

Այս պատճառները հաշվի առնելով նախաձեռնվել և իրականացվում է Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական և տնտեսական նշանակություն ունեցող «Հայաստանի Հանրապետության Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցք» ծրագիրը, որը կհեշտացնի ճանապարհային հաղորդակցությունը Հայաստանի երկու հարևանների՝ Իրանի հետ հարավից և Վրաստանի հետ հյուսիսից՝ ապահովելով հասանելիություն դեպի միջազգային առևտրային երթուղիներ և շուկաներ:

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագիրը Հայաստանի տարածքում իրականացվող խոշոր ենթակառուցվածքային ծրագիր է, որի նպատակը Հայաստանի ողջ տարածքով անցնող միջազգային բարձր չափանիշերին համապատասխան մոտ 556 կմ երկարությամբ ճանապարհի կառուցումն է, որը Չինաստանը, Կենտրոնական Ասիան, Հնդկաստանը և Իրանը կկապի Վրաստանի, Ռուսաստանի Դաշնության և Եվրոպայի հետ:

Հատելով Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը հարավից մինչև հյուսիս (Մեղրի-Կապան-Գորիս-Երևան-Աշտարակ-Գյումրի-Բավրա)՝ ճանապարհային միջանցքը միանում է Փոթիի և Բաթումի նավահանգիստներ (Սև ծով) տանող ճանապարհին, ապա նաև՝ դեպի Ռուսաստան, ԱՊՀ երկրներ և Եվրամիության երկրներ ձգվող վրացական ճանապարհի հարավային հատվածին: Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է մոտ 100կմ-ով կրճատել գործող ճանապարհը, ինչպես նաև ավելացնել երթևեկության համար սահմանված թույլատրելի արագությունը՝ 60կմ/ժամից հասցնելով 100-110կմ/ժամ: «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը» հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ճանապարհային ցանցի զարգացման առաջնահերթ ծրագիր:

Ռազմավարական և տնտեսական նշանակություն ունեցող մեկ այլ ծրագիր է «Հայաստանի Հարավային երկաթուղի» ծրագիրը:

Հայաստանի Հարավային երկաթուղին, լինելով Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջազգային միջանցքում կապող կարևոր օղակ, ինչպես նաև Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու ծրագրի մի մաս՝ Հայաստանի Հանրապետության համար ունի ռազմավարարան և տնտեսական նշանակություն: Ի հավելումն ներկայումս գործող երկաթուղու, նոր երկաթուղին կունենա առանցքային դեր տարածաշրջանային փոխգործակցության բարելավման, տնտեսական աճի ապահովման հարցում, ինչպես նաև կստեղծի ամենակարճ տրանսպորտային երթուղին Սև ծովից դեպի Պարսից ծոց՝ հաղորդակցություն ապահովելով Հարավարևելյան Ասիայի և եվրոպական երկրների միջև:

Հայաստանի Հարավային երկաթուղին կապելու է իրար կենտրոնական Հայաստանի գործող երկաթուղային համակարգը, Սևանա լճի մոտ գտնվող գործող երկաթուղային գծի ճյուղավորումը և Մեղրիի մոտ գտնվող ԻԻՀ-ի հետ Հայաստանի հարավային սահմանը:

Նոր երկաթուղային գծի երկարությունը կազմելու է 304.71 կմ: Ծրագրով նախատեսվում է 84 կամուրջներ, 60 թունելներ, գծի երկայնքով կառուցվելու են 27 կայարաններ:

Վերոնշյալ ծրագրերը սկիզբ առնելով Հարավկովկասյան տարածաշրջանի գործող ավտոմոբիլային և երկաթուղային ցանցերից, անցնում են Հայաստանի կենտրոնական և հարավային մասերի լեռնային շրջաններով, հատում են Հայաստանի և Իրանի միջև պետական սահմանը՝ կապ ստեղծելով Հարավային

Կովկասի, Արևմտյան, Կենտրոնական Ասիայի երկրների հետ՝ հասնելով ընդհուպ մինչև Արևելյան Ասիա:

«Հայաստանի Հանրապետության Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» և «Հայաստանի Հարավային երկաթուղի» ծրագրերը հնարավորություն են ընձեռում վերականգնել Հայաստանի Հանրապետության դերը որպես տարանցիկ երկիր՝ հանդիսանալով Մետաքսի ճանապարհի վրա գտնվող և դեպի Եվրոպա տանող ցամաքային փոխադրումների միջանցքի կարևոր հատված: Այս ծրագրերը կարող են ոչ միայն նպաստել տարածաշրջանի երկրների տնտեսական զարգացմանը, այլև միջազգային չափանիշներին բավարարող տրանսպորտային ուղիներով ցամաքային փոխադրումների միջանցք ստեղծել Կենտրոնական և Արևելյան Ասիայի, Չինաստանի և Եվրոպական երկրների միջև ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների համար՝ այսպիսով նշանակալի տնտեսական եկամուտներ ապահովելով ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այդ երկրների համար: Վերոնշյալ ծրագրերի իրականացման արդյունքում զգալիորեն կնվազեն Հայաստանի Հանրապետության արդյունաբերողների, արտահանողների և ներկրողների տրանսպորտային միջոցների համար կատարվող ծախսերը, ինչպես նաև խթան կհանդիսանա ՀՀ հանքարդյունաբերական շրջանների զարգացման համար:

Հայաստանի Հանրապետության ենթակառուցվածքային այս խոշորագույն ծրագրերը նշանակալիորեն կնպաստեն դեպի Եվրոպական միության անդամ երկրներ, ԵՏՄ երկրներ, Ռուսաստանի Դաշնություն և ԱՊՀ երկրներ բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների իրականացմանը՝ ակնհայտորեն կրճատելով տարածությունը և ծախսերը Արևելյան Ասիայի երկրներից դեպի Եվրոպական երկրներ:

Հայաստանի Հանրապետությունը նաև իրականացնում է Բագրատաշեն, Բավրա և Գոգավան սահմանային անցակետերի արդիականացման ծրագիր, որի նպատակն է ստեղծել եվրոպական չափանիշներին համապատասխանող սահմանային կառավարման համակարգ:

Ծրագիրը նախատեսում է ապահովել սահմանային անցակետային ենթակառուցվածքների արդիականացում, դեպի Վրաստան, իսկ այդուհետ դեպի ԵՄ երկրներ մարդկանց, տրանսպորտային միջոցների և բեռների ազատ տեղաշարժի դյուրացում: Արդյունքում մարդիկ կկարողանան 10-15 րոպեի փոխարեն սահմանը հատել 3-4 րոպեում, իսկ տրանսպորտային միջոցները՝ 30-35 րոպեում:

Տարանցման քաղաքականության հիմնական նպատակն է հիմնվելով միջազգային իրավունքի նորմերի վրա, իրացնել անխափան տարանցման հնարավորությունները, ինչը կնպաստի հայրենական արտադրանքի մուտքին արտաքին շուկաներ և կընդլայնի Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային առևտրում:

Առաջնահերթություն 2. **Ենթակառուցվածքների զարգացում և պահպանում**

ա) տրանսպորտ

Ներկայումս Հայաստանի կառավարությունը առաջնայնություն է տալիս տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին, որոնք ընդգրկում են վերը նկարագրված՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագիրը և Ալավերդի-Վրաստանի սահման (M6) տարանցիկ ճանապարհի կառուցմանը:

Առաջին ծրագիրն իրականացվում է բազմատրանշ ֆինանսավորման եղանակով: Այն բաժանված է առանձին տրանշերի, որոնց շրջանակում կնքվում են վարկային առանձին պայմանագրեր, ընդ որում, «Տրանշ 1-ով նախատեսվում է իրականացնել Երևան-Աշտարակ /11.4 կմ/ և Երևան-Արտաշատ /20 կմ/ մայրուղիների արդիականացումը և բացել երկկողմ երթևեկություն, Տրանշ 2-ի շրջանակներում կառուցվող Աշտարակ-Թալին 42 կմ մայրուղու շինարարությունը նախատեսվում է ավարտել մինչև 2017թ., Տրանշ 3-ի շրջանակներում իրականացվող աշխատանքները Թալին-Լանջիկ /18.7 կմ/ և Լանջիկ-Գյումրի /27.5 կմ/ ճանապարհահատվածներում սկսվել են 2015թ. առաջին կիսամյակում և ընթացքի մեջ են: Նախապատրաստվում են մյուս տրանշների հայտերը և մրցույթային փաստաթղթերը:

Ալավերդի-Վրաստանի սահման (M6) տարանցիկ ճանապարհը, որի նախագծման աշխատանքները արդեն ավարտված են, Հայաստանի կենտրոնը կապելու է Վրաստանի հետ, ինչով և որոշվում է ճանապարհի տարանցիկ ռազմավարական նշանակությունը:

Միաժամանակ իրականացվում են աշխատանքներ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում՝ ուղղված համաձայնեցված տրանսպորտային քաղաքականության ձևավորմանը, քննարկման ընթացքում է «Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում տրանսպորտային միջոցների գրանցամատյանի և կաբոտաժային ավտոմոբիլային փոխադրումների իրականացման վերահսկման վարման» փաստաթղթի նախագիծը:

Երկաթուղի

Ռազմավարական տնտեսական նշանակություն ունեցող մեկ այլ ծրագիր է «Հայաստանի Հարավային երկաթուղի» ծրագիրը:

Հայաստանի Հարավային երկաթուղին, լինելով Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջազգային միջանցքում կապող կարևոր օղակ, ինչպես նաև

Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու ծրագրի մի մաս՝ Հայաստանի Հանրապետության համար ունի ռազմավարական և տնտեսական առումներով կենսական նշանակություն: Ի հավելումն ներկայումս գործող երկաթուղու, նոր երկաթուղին կունենա առանցքային դեր տարածաշրջանային փոխգործակցության բարելավման, տնտեսական աճի ապահովման հարցում, ինչպես նաև կստեղծի ամենակարճ տրանսպորտային երթուղին Սև ծովից դեպի Պարսից ծոց՝ հաղորդակցություն ապահովելով Հարավարևելյան Ասիայի և եվրոպական երկրների միջև: Ենթակառուցվածքային այս խոշոր ծրագրի շրջանակներում ապահովվելու է Հայաստանի կենտրոնական մասի կապը իրանական սահմանի հետ՝ հնարավորություն տալով բեռնափոխադրումներ իրականացնել սևծովյան նավահանգիստներից դեպի Պարսից ծոց:

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում քննարկվում է երկաթուղային տրանսպորտի ոլորտում «Մաքսային միությունում գործող տեխնիկական կանոնակարգերի ստանդարտների ցանկերի արդիականացման վերաբերյալ» փաստաթղթի նախագիծը

բ) էներգետիկա

Չունենալով առաջնային վառելիքաէներգետիկ ռեսուրսների պաշարներ, Հայաստանի էներգետիկ համակարգը բավականաչափ բալանսավորված, ճյուղավորված և բազմազանեցված է, ինչը բնորոշ է հիմնականում զարգացած երկրներին: Զարգացած են միջուկային, հիդրո- և ջերմային էներգետիկան, զարգացման մեծ ներուժ ունեն հողմային, արևային և վերականգնվող էներգետիկայի այլ ուղղությունները: Բնական գազը Հայաստանը Վրաստանով անցնող խողովակաշարով ստանում է Ռուսաստանի Դաշնությունից: Բացի այդ շահագործվում է նաև Իրան-Հայաստան գազատարը, որն ապահովում է գազի երկրորդ տեխնոլոգիական մուտքը Հայաստան:

Ներկայումս Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից շրջանառության մեջ է դրվել «Եվրասիական տնտեսական միության գազի ընդհանուր շուկաների ձևավորման» հայեցակարգի նախագիծը, որի ընդունումը նախատեսվում է 2016 թվականին:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի շրջանակներում քննարկվում է նաև «Եվրասիական տնտեսական միության նավթի և նավթամթերքի ընդհանուր շուկաների ձևավորման» հայեցակարգի նախագիծը, որով նախատեսվում է նավթի և նավթամթերքի ընդհանուր փախադրման համակարգերին հասանելիության միասնական կանոնների մշակում և ընդունում Միության անդամ երկրների տարածքում:

ՀՀ էներգետիկ համակարգի կայունության և հուսալիության անհրաժեշտ մակարդակը պահպանելու, ամրապնդելու և զարգացնելու նպատակով՝ 2013թ. ՀՀ

Նախագահի կարգադրությամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը: ՀՀ կառավարությունը 2014թ. հաստատել է հայեցակարգից բխող 2014-2020թթ. միջոցառումների ծրագիրը:

Երկարաժամկետ հեռանկարում էներգետիկայի բնագավառում ռազմավարական նշանակություն ունեցող նախագծերը նախանշելու և մեկտեղելու նպատակով մշակվել է և ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 10-ի նիստի N 54 արձանագրային որոշմամբ հաստատվել է «ՀՀ էներգետիկ համակարգի երկարաժամկետ (մինչև 2036թ.) զարգացման ուղիները» փաստաթուղթը:

Էներգետիկայի բնագավառի ռազմավարական փաստաթղթերում նշված են զարգացման չորս հիմնական ուղղությունները՝ ատոմային էներգետիկայի զարգացում, վերակագնվող էներգետիկ պաշարների տնտեսապես արդարացված պոտենցիալի յուրացում, տարածաշրջանային ինտեգրում, առաջնային վառելիքաէներգետիկ ռեսուրսների ներմուծման և արտահանման ուղիների և ձևերի տարատեսակեցում (դիվերսիֆիկացիա):

Ներկայումս էներգետիկայի ոլորտում զարկ է տրվել հետևյալ ծրագրերի իրականացմանը՝

- Իրան-Հայաստան 400 կՎ լարման երկշղթա էլեկտրահաղորդման օդային գծի և 400 կՎ «Նորավան» ենթակայանի կառուցում (մինչև 2018թ.): Էլեկտրահաղորդման գծի և ենթակայանի կառուցումը հնարավորություն կտա երկու երկրների էներգահամակարգերի միջև էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 300 ՄՎտ-ից հասցնել 1000-1200 ՄՎտ-ի, միաժամանակ բարձրացնել էներգահամակարգերի զուգահեռ աշխատանքի հուսալիությունը և ՀՀ էներգետիկ անվտանգությունը:
- Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցում: Ծրագրի նպատակն է միացնել հայկական և վրացական էներգահամակարգերը՝ վրացական սահմանին մոտ՝ Այրումում (Հայաստան) տեղակայվող 500/400/220 կՎ բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանով (վերջնական հզորությունը 1050 ՄՎտ): Էլեկտրահաղորդման գծի կառուցմամբ զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացումը, ինչպես նաև կստեղծվի նախապայման՝ ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկական համակարգի հետ զուգահեռ աշխատանք կազմակերպելու համար:
- Հայաստան-Վրաստան և Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծերի միացման նպատակով Հրազդանի տարածաշրջանում նախատեսվում է կառուցել 400 կՎ լարման ենթակայան (մինչև 2018թ.)

- Փոքր ՀԷԿ-երի կառուցում գումարային մինչև 150 ՄՎտ հզորությամբ, մինչև 2021թ.՝ հաշվի առնելով տեսակարար ներդրումների աճը և բնապահպանական պահանջների ապահովումը (մասնավոր ներդրումներ):
- Միջին հզորության ՀԷԿ-երի (Լոռիբերդ-66 ՄՎտ և Շնող-70 ՄՎտ) զարգացում և շահագործման հանձնում 2021թ. (մասնավոր ներդրումներ) ինչը կավելացնի տարեկան արտադրանքը շուրջ 500 մլն. կՎտժ:
- 40 ՄՎտ գումարային հզորությամբ արևային ՖՎ կայանների կառուցում մինչև 2021թ.՝ SREP ծրագրի ֆինանսավորմամբ:
- Նոր ջերմային Համակցված շոգեգազային ցիկլով էներգատեղակայանքի կառուցում, 234 ՄՎտ հզորությամբ
- 30 ՄՎտ երկրաջերմային էլեկտրական կայանի կառուցում և շահագործման հանձնում 2024թ.՝ SREP ծրագրի աջակցությամբ: Ծրագիրն իրատեսական է եթե 2015թ.-ին հորատման արդյունքում կհաստատվի երկրաջերմային աղբյուրի պոտենցիալը,
- Հողամաէլեկտրակայանների կառուցում 200 ՄՎտ գումարային հզորությամբ
- Հայկական ԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգում մինչև 2027թ., միաժամանակ շարունակելով անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:
- Մինչև 600 Մվտ հզորությամբ որ միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրի իրականացում:

Վերը թվարկված միջոցառումներից բացի հարկ է նշել նաև, որ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015թ. մայիսի 8-ի թիվ 12 որոշմամբ հաստատվել է Եվրասիական տնտեսական միության ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման հայեցակարգը: Ներկայումս քննարկման փուլում են Եվրասիական տնտեսական միության ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման ծրագրի մշակման աշխատանքները:

Առաջնահերթություն 3. **Միջազգային առևտուր և առևտրի դյուրացում**

ՀՀ կառավարությունը ձեռնարկել է և շարունակում է որոշակի քայլեր ձեռնարկել միջազգային տնտեսական համագործակցության խթանման, միջազգային առևտրի տիրույթում Հայաստանի Հանրապետության առավել լիարժեք ներգրավման և առևտրի դյուրացման ուղղությամբ՝ ընդունելով ու գործարկելով համապատասխան միջոցառումների ծրագրեր: Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման համար կարևորագույն նախապայմաններից է գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը, և դրան հասնելու համար ՀՀ կառավարությունը նպատակ ունի Հայաստանում ստեղծել ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորումների, ծառայությունների և

վարչարարական ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայր, հավասար մրցակցային պայմաններ, գործարարությանն օժանդակող զարգացած շուկայական ենթակառուցվածքներ, ինչպես նաև իրականացնել հարկային և մաքսային հավասարակշռված քաղաքականություն:

Այսպես, նկատի ունենալով, որ Վիեննայի ԳԾ 45-րդ կետի (գ) ենթակետը նախատեսում է ավելի բարենպաստ գործարար միջավայրի ստեղծում տարածաշրջանային և միջազգային արտադրություն-սպառում շղթայում ազգային ընկերությունների ինտեգրման նպատակով, այդ ուղղությամբ բարեփոխումներ իրականացնելու նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվել են գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 7 ծրագիր յուրաքանչյուր տարվա համար նախատեսված միջոցառումների վերաբերյալ:

Գործարար միջավայրի բարելավման շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են և շարունակական հիմունքներով իրականացվում են միջոցառումներ հետևյալ ուղղություններով՝

- Տեղեկատվության փոխանակման էլեկտրոնային համակարգերի ներդրման միջոցով պետական կառավարման մարմինների հետ ձեռնարկությունների շփումների էական կրճատում,
- Գործարարությանը վերաբերող պետական կարգավորումների կրճատում և պարզեցում,
- Տեսչական համակարգի բարեփոխումների իրականացում՝ մասնավորապես օպտիմալացնելով տեսչական մարմինների թիվը և գործառույթները, ուշադրություն դարձնելով գնահատման ժամանակակից չափանիշների ներդրմանը,
- Գործարար միջավայրի կարգավորման լավագույն փորձի պարբերական ուսումնասիրում և այն Հայաստանում ներդնելու՝ տեղական առանձնահատկությունները հաշվի առնելով:

Վիեննայի ԳԾ 45-րդ կետի (դ) ենթակետով նախատեսված՝ միջազգային առևտրում ազգային ընկերությունների, հատկապես, փոքր և միջին ձեռնարկությունների առավել արդյունավետ ներգրավմանն ուղղված քաղաքականություն խթանելու ուղղությամբ բարեփոխումներ իրականացնելու նպատակով 2015թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել փոքր և միջին ձեռնարկատիրության /ՓՄՁ/ զարգացման 2016-2018թթ. ռազմավարությունը, որը գործուն մեխանիզմների կիրառմամբ նախատեսում է անհրաժեշտ նախապայմաններ ստեղծել փոքր և միջին ձեռնարկատիրության հեռանկարային զարգացման համար՝ ուղղված գիտատար և նորարարական արտադրությունների աջակցմանը, տեխնոլոգիաների փոխանցման համար նպաստավոր պայմանների ձևավորմանն ու փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների արտաքին տնտեսական գործունեության ընդլայնմանը:

Վիեննայի ԳԾ 45-րդ կետի (զ) ենթակետով նախատեսված է այնպիսի ռազմավարության և միջոցառումների իրականացումը, որոնք ուղղված են տնտեսության և արտահանումների նշանակալի տարատեսակեցմանը և ավելացված արժեքի աճին:

Այս ուղղությամբ բարեփոխումներ իրականացնելու նպատակով 2011թ. դեկտեմբերի 15-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը»: Փաստաթուղթը միտված է տնտեսական աճի նոր շարժիչ ոլորտների ձևավորմանն ու զարգացմանը՝ ի հաշիվ ներկայումս արտահանող և արտահանման ներուժ ունեցող ոլորտների զարգացման: Փաստաթղթում նախանշվել են արտահանման տեսանկյունից հեռանկարային 11 ոլորտներ, որոնցից 8-ի (գինեգործություն, կոնյակագործություն, ոսկեգործություն, ժամագործություն, ադամանդագործություն, դեղագործություն և բիոտեխնոլոգիաներ, թեթև արդյունաբերություն, ճշգրիտ ճարտարագիտություն) ոլորտային ռազմավարությունները և դրանց իրականացումն ապահովող գործողությունների ծրագրերն արդեն իսկ մշակվել և հավանության են արժանացել ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստում:

Առաջնահերթություն 4. **Տարածաշրջանային ինտեգրում և համագործակցություն**

Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային տնտեսական ինտեգրման և համագործակցության խթանման նպատակով ՀՀ կառավարության կազմում ստեղծվել է գլխադասային համապետական գործադիր մարմին՝ Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունը:

Տարածաշրջանային ինտեգրման առումով կարևորվում են ինտեգրման գործընթացները Եվրասիական տնտեսական միություն շրջանակներում, ինչպես նաև համագործակցություն Եվրոպական միության հետ:

2015թ. հունվարի 2-ից Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես դարձել է Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ երկիր: Տարածաշրջանային ինտեգրման առումով կարևորվում են ինտեգրման գործընթացները Եվրասիական տնտեսական միության շրջանակներում:

Հայաստանի՝ ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրացիոն գործընթացների հետագա զարգացման առումով իրականացվում են աշխատանքներ, մասնավորապես՝ էներգետիկայի և տրանսպորտի ուղղություններով՝ ուղղված համակարգված էներգաքաղաքականության վարման և ընդհանուր էներգաշուկաների (էլեկտրաէներգիայի, գազի, նավթի, նավթամթերքների

շուկաներ) ձևավորմանը, ինչպես նաև Համաձայնեցված տրանսպորտային քաղաքականության ձևավորմանը:

Կարևորվում է նաև Եվրոպական միության հետ համագործակցությունը: ԵՄ խորհրդի կողմից 2015 թվականի հոկտեմբերին ստացվել է համապատասխան մանդատ երկկողմ համագործակցության վերաբերյալ նոր փաստաթղթի (համաձայանգրի) շուրջ բանակցությունների վերաբերյալ, որը ներառում է նաև համագործակցությունը տնտեսական ոլորտում: 2015 թվականի դեկտեմբերի 7-ից մեկնարկել են փաստաթղթի շուրջ բանակցությունները՝ Հաշվի առնելով ՀՀ ստանձնած պարտավորությունները այլ ինտեգրացիոն գործընթացներում:

Մեծ ուշադրություն է դարձվում նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցությանը: Հայաստանը սերտորեն համագործակցում է Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Ասիական զարգացման բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի, Առևտրի և զարգացման սևծովյան բանկի, Եվրասիական զարգացման բանկի, Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի հետ:

Առաջիկայում դիտարկվում է Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Ասիական ենթակառուցվածքային ներդրումային բանկին: Բանկին միանալը կարող է արդյունավետ հարթակ լինել դեպի ասիական տարածաշրջան զարգացման ծրագրերի ուղղորդման ու իրականացման, ինչպես նաև տարածաշրջանային բնույթի ծրագրերում առավել ակտիվ մասնակցություն ունենալու համար, մասնավորապես ենթակառուցվածքային հաղորդակցության ընդլայնման ու բազմազանեցման առումով:

Առաջնահերթություն 5. **Տնտեսական կառուցվածքային վերափոխում**

Վիեննայի ԳԾ 64-րդ կետի (ա) ենթակետով սահմանված նպատակներին համահունչ ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N442Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսվում է «շրջանակային» քաղաքականություններին զուգընթաց իրականացնել նաև «ուղղակի» քաղաքականություններ, որոնք պետք է նպաստեն երկարատև բնույթ ունեցող, աշխատատեղեր ստեղծող տնտեսական աճի ապահովմանը: Ելնելով տնտեսական զարգացման նպատակից, ինչպես նաև աշխատատեղեր ստեղծելու ներուժից՝ «ուղղակի» քաղաքականություններն ուղղվում են համապատասխան ոլորտներում, ճյուղերում և բնագավառներում աշխատատեղերի ստեղծման

ապահովմանը՝ դրանց զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծելու և խոչընդոտները վերացնելու միջոցով:

Նկատի ունենալով, որ յուրաքանչյուր ոլորտի առանձնահատկությունները թելադրում են ինքնահատուկ քաղաքականություն և ելնելով աշխատատեղեր ստեղծելու կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակներից, ինչպես նաև որակյալ տնտեսական աճ ապահովելուն ուղղված համապատասխան ներդրումից՝ ծրագրի ենթակա ոլորտային և բնագավառային գերակայություններից են մասնավորապես արդյունաբերությունը և արտահանման խրախուսումը, զբոսաշրջության զարգացումը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը և փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծման և գործունեության ապահովումը:

Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի ենթակառուցվածքներ

Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտը դեռևս 2000թ. հայտարարվել է Հայաստանի տնտեսության գերակա ճյուղերից մեկը, որի զարգացումը սկզբունքային ներդրում է ունենալու գիտելիքահենք տնտեսության անցնելու գործընթացում: 2008թ. ՀՀ Կառավարությունն ընդունել է ոլորտի զարգացման տասնամյա ռազմավարությունը, որը ներառում է ենթակառուցվածքի զարգացման, ՏՏ շրջանավարտների որակավորման բարձրացման, սկսնակ ընկերությունների համար վենչուրային և ֆինանսավորման այլ մեխանիզմների ստեղծման և այլ խնդիրներ: Ռազմավարության նպատակներից են՝ նոր տեխնոպարկերի և ինկուբատորների կառուցումը, խոշոր վենչուրային հիմնադրամի ստեղծումը, տեղական ՏՏ արտադրանքի և ծառայությունների համար հայկական շուկայի ծավալների ընդլայնումը, օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալների աճը:

ՀՀ կառավարության մասնակցությամբ մի շարք նախաձեռնություններ են իրականացվել նշված նպատակներին հասնելու նպատակով: Այսպես, 2007թ. National Instruments կորպորացիան հիմնեց ճարտարագիտական և գիտահետազոտական գրասենյակ Երևանում: 2008թ. սկիզբ են առել և ներկայումս շարունակական են Գյումրու տեխնոպարկի գործարկման աշխատանքները, որտեղ հիմնվել է D-Link International կազմակերպության ծրագրային մշակումների տարածաշրջանային լաբորատորիան: 2011թ. ՀՀ Կառավարության և «Մայքրոսոֆթ» կորպորացիայի միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակում 2011թ. մայիսին Երևանում բացվել է «Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնը», որի նպատակն է «Մայքրոսոֆթ» կորպորացիայի գործիքների և ծրագրերի կիրառմամբ ստեղծել միջավայր՝ մասնագիտական գիտելիքների ու կարողությունների զարգացման համար:

ՏՏ ոլորտի զարգացման քաղաքականության շրջանակներում միջոցներ են ձեռնարկվելու ապահովելու համար տեխնոպարկերի, ինկուբատորների և ՏՏ ոլորտի ենթակառուցվածքներ հանդիսացող այլ կառույցների ստեղծման գործընթացի շարունակականությունը, ԲՈՒՀ-երին ժամանակակից կրթական ծրագրերի ներդրման և անհրաժեշտ լաբորատորիաների ձեռք բերման հարցում օժանդակությունը՝ խթանելով դրանց համագործակցությունը մասնավոր ընկերությունների հետ, ոլորտի արտահանման ներուժը մեծացնելու նպատակով հարկային բարենպաստ քաղաքականության իրականացումը, ՏՏ ոլորտում ՓՄՁ-ների և սկսնակ ընկերությունների պետական աջակցության ծրագրերի իրականացումը, այդ թվում՝ շուկաների հասանելիության, մասնագիտական վերապատրաստման ծրագրերի և տեղեկատվական դաշտի ապահովումը, ինովացիոն արտադրանք կամ ծառայություններ առաջարկող ՏՏ ձեռնարկություններին ուղղակի օժանդակության տրամադրումը:

Զբոսաշրջության ոլորտի ենթակառուցվածքներ

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջությունն իր զարգացման տեմպերով և արդյունքներով երկրի առավել դինամիկ զարգացող ճյուղերից է: Զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության նպատակները սահմանված են «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և 2008 թվականի փետրվարի 13-ին ՀՀ կառավարության հավանությանն արժանացած՝ Զբոսաշրջության զարգացման հայեցակարգով:

Զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության նպատակն է մեծացնել զբոսաշրջության ներդրումը ազգային եկամտի ավելացման, համաչափ տարածքային զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և աղքատության նվազեցման գործընթացում՝ պայմանավորված զբոսաշրջային այցելությունների քանակի աճով, զբոսաշրջությունից ստացված եկամտի ավելացմամբ և աշխատատեղերի ստեղծմամբ:

Զբոսաշրջության զարգացման բարձր տեմպերը ապահովելուն ուղղված քաղաքականության հիմնական ուղղությունը համապատասխան ենթակառուցվածքների կատարելագործումն է պետություն-մասնավոր հատված գործիքակազմի օգտագործմամբ, մասնավորապես՝ Հայաստան մուտք գործելու և Հայաստանից դուրս գալու բարձր տրանսպորտային ծախսերի կրճատմանն ուղղված քաղաքականությունը: Կարևոր նշանակություն կարող են ունենալ առանձին զբոսաշրջային կենտրոնների (Ջերմուկի, Ծաղկաձորի, Դիլիջանի և այլ) զարգացման ռազմավարությունների հետևողական իրականացումը: Նման ծրագրերի իրականացումը կարևոր է նաև տարածքների համաչափ զարգացումն ապահովելու տեսանկյունից: Նշված քաղաքականությունը ներառում է «բաց

երկնքի» քաղաքականության իրականացումը՝ ցածր բյուջետային ավիափոխադրողների ներգրավմամբ, երկաթուղային ուղևորափոխադրումների շուկայի մրցակցային բնույթի ապահովումը, Երևանից դուրս զբոսաշրջության ենթակառուցվածքների ստեղծման և արդիականացման, ինչպես նաև միջազգային հյուրանոցային օպերատորների ներգրավման խրախուսումը:

ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ» 2016 թվականի ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը:

Ինովացիոն ոլորտի ենթակառուցվածքներ

ԳԾ 64-րդ կետի (բ) ենթակետով սահմանված նպատակներից ելնելով՝ ձեռնարկվել են ինովացիոն /նորարարական/ գործունեության խթանմանն ու կարգավորմանն ուղղված գործընթացներ:

Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն գործունեության կարգավորումն իրականացվում է Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին ՀՀ օրենքի շրջանակներում: Աջակցությունն իրականացվում է Ինովացիոն գործունեությանն աջակցության տարեկան ծրագրերով:

Ծրագրերի իրականացման ֆինանսավորումն արտացոլվում է պետական բյուջեում առանձին տողով: Ինովացիոն գործունեությանն աջակցության տարեկան ծրագրերը ներառում են միջոցառումներ հետևյալ ուղղություններով՝ ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում, ինովացիոն նախագծերի իրականացում, կադրերի պատրաստում և վերապատրաստում, խորհրդատվություն, տեխնոլոգիաների փոխանցում և առևտրայնացում, միջազգային ստանդարտների ներդրում:

ՀՀ կառավարությունը 2006թ. հոկտեմբերի 19-ի N1466Ն որոշմամբ սահմանել է ինովացիոն ոլորտի զարգացման հետևյալ գերակայությունները՝ ա) ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծում ու զարգացում, բ) էներգիայի այլընտրանքային աղբյուրներ, գ) բարձր տեխնոլոգիական մշակումներ, դ) էկոլոգիապես նախընտրելի տեխնոլոգիաների ներդրում ու զարգացում:

Վիեննայի ԳԾ 64-րդ կետի (դ) ենթակետի նպատակներից և խնդիրներից ելնելով, Հայաստանի Հանրապետությունը նաև հայտարարել և իրականացնում է «բաց դռների» քաղաքականություն: ՀՀ-ում ներդրումային ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտն է՝ 1994 թվականին ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի՝ ներդրումներին վերաբերող այլ դրույթները, որոնք նույնպես համահունչ են Վիեննայի ԳԾ 64-րդ կետի (դ) ենթակետին, այն է՝ «խթանել ավելի տարատեսակեցված օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավումը

բարենպաստ միջավայր ստեղծելու միջոցով՝ նպատակ ունենալով մեծացնել արժեքի ավելացման ծավալները, արտադրողական կարողությունը, տարանցիկ փոխադրման ենթակառուցվածքը և լուծել տարածաշրջանային ցանցի շրջանակներում դեպի ծով ելք չունեցող երկրներն իրար միացնող կապերի բացակայության հարցը»: Միաժամանակ, ուղղակի օտարերկրյա ներդրումների ներգրավման, դրա արդյունքում առաջադեմ տեխնոլոգիաների ներդրման միջոցով արտահանման ծավալների աճին, նոր աշխատատեղերի ստեղծմանը նպաստելու և կայուն տնտեսական զարգացման ապահովման նպատակով Հայաստանում ստեղծվել են ազատ տնտեսական գոտիներ, որոնց գործունեությունն ապահովելու համար առկա է համապատասխան իրավական դաշտ:

Վիեննայի ԳԾ 64-րդ կետի (զ) ենթակետի տիրույթում Հայաստանի արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությունը, համաձայն 2011 թվականի ՀՀ Կառավարության թիվ 49 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության» փաստաթղթի, վարվում է ընդհանրական միջոցառումների իրականացման և հատուկ գործիքակազմի կիրառման ուղիներով: Հատուկ գործիքակազմի կիրառումը, ի թիվս այլ միջոցառումների, ներառելու է նաև հետազոտությունների և մշակումների խթանում՝ տեխնոպարկերի և արդյունաբերական պարկերի հիմնման, ընկերությունների և ԲՈՒՀ-երի համատեղ հետազոտությունների ու մշակումների համար դրամաշնորհների տրամադրման և վենչուրային հիմնադրամների ստեղծման միջոցով, ինչը համապատասխանում է Վիեննայի ԳԾ 64-րդ կետի (զ) ենթակետում սահմանված նպատակներին, այն է՝ «ստեղծել արդյունաբերական կլաստերներ, ինչպիսիք են արտահանման մշակման գոտիները և գերազանցության տարածաշրջանային կենտրոնները՝ նպատակ ունենալով խթանել գիտելիքի փոխանակման ցանցերը և ընկերությունների միջև կապը»:

Վիեննայի ԳԾ 64-րդ կետի (է) ենթակետի տիրույթում, Հայաստանի Հանրապետությունում մշակվում և իրականացվում են ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրեր, մասնավորապես՝ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում, գործարար ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական, ֆինանսական և ներդրումային աջակցություն, տեղական տնտեսական զարգացում, ոլորտային բիզնեսներին աջակցություն, կանանց ձեռներեցությանն աջակցություն, տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և այլն: ՀՀ կառավարությունը 2015թ. հոկտեմբերի 1-ին հավանության է արժանացրել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018թթ. ռազմավարությունը, որի շրջանակներում առաջիկա տարիներին շեշտը դրվելու է գիտելիքի, որակի, ՓՄՁ սուբյեկտների և ընդհանրապես ոլորտի մրցունակության բարձրացման վրա:

Առաջիկա երեք տարիներին ՓՄՁ զարգացման ռազմավարության գլխավոր նպատակը ներքին և միջազգային շուկաներում մրցունակ ՓՄՁ սուբյեկտների գործունեության ապահովումն է, ինչպես նաև Հայաստանի ՓՄՁ ոլորտի խթանման համար հիմնական կարևոր սկզբունքների ներկայացումը, փոքր և միջին բիզնեսի գործունեության համար մրցունակ միջավայր ապահովելը՝ կազմակերպությունների զարգացման և ձեռնարկատիրական գիտելիքի տարածման, ֆինանսական միջոցների հասանելիության, հարկային համակարգի պարզեցման և մասնավոր հատվածի հետ երկխոսության մեխանիզմների կատարելագործման, ինչպես նաև նորարարությունների և կայուն զարգացման խթանման միջոցով: Այս քայլերը և միջոցառումները համապատասխանում են Վիեննայի ԳԾ 64-րդ կետի (է) ենթակետով նախատեսված խնդիրներին և նպատակներին՝ «առաջնահերթ ուշադրություն դարձնել մասնավոր հատվածի, մասնավորապես, փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմանը»:

Վիեննայի ԳԾ 64-րդ կետի (ը) ենթակետով սահմանվում է՝ «մշակել արդյունաբերական քաղաքականություն, որում հաշվի է առնվում ֆինանսական ռեսուրսների բարելավված հասանելիության, համապատասխան մարդկային կարողությունների զարգացման և բարենպաստ տնտեսական ենթակառուցվածքում ներդրումների անհրաժեշտությունը՝ որպես մասնավոր հատվածի հետագա ամրապնդման համար միջոց»: Այս նպատակից ելնելով, Հայաստանի արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը նախատեսվում է հատուկ գործիքակազմի կիրառում ֆինանսական աջակցության և ֆինանսավորման մատչելիության ապահովման ուղղությամբ, մարդկային գործոնի և ներուժի լիարժեք ներգրավմամբ: Մասնավորապես նախատեսվում են՝ հատուկ պայմաններով վարկավորում (օրինակ՝ որակի ապահովման համակարգի ներդրման, արտահանման ընդլայնման, աշխատատեղերի ստեղծմանն ուղղված ներդրումների համար), արտահանման երաշխիքների տրամադրում, վարկային երաշխիքների տրամադրում, սեփական կապիտալի ֆինանսավորում, ինչպես նաև ներդրումային հիմնադրամներում մասնակցություն: Հայաստանի Հանրապետության 2014-2024թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի 181-րդ կետով սահմանվում է, որ «արդյունաբերական քաղաքականության ուղղորդող տեսլականը Հայաստանը բարձրարժեք և գիտատար ապրանքների և ծառայությունների արտադրության երկիր դարձնելն է, որի առանցքը ստեղծագործ մարդկային կապիտալն է: Այս տեսլականի իրագործումը պահանջում է փուլային մոտեցում՝ ենթադրելով աստիճանական անցում ռեսուրսաինտենսիվ արտադրություններից դեպի ունակությունների և հմտությունների, և այնուհետև՝ գիտելիքի վրա հիմնված արտադրությունների գերակշիռ դերակատարության երկարաժամկետ հեռանկարում»:

Բնապահպանության ոլորտ

Վիեննայի գործողությունների ծրագրի 15-րդ կետով հաստատվում է, որ Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրները խոցելի են կլիմայի փոփոխության նկատմամբ: Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի Կողմ երկրների պարտավորությունները սահմանող 4-րդ հոդվածի 5-րդ կետի (i) ենթակետով դեպի ծով ելք չունեցող և տարանցիկ երկրները ճանաչվում են որպես հատկապես խոցելի կլիմայի փոփոխության նկատմամբ և խրախուսվում են գործողություններ, որոնք նպատակաուղղված են ֆինանսավորմանը, ապահովագրության և տեխնոլոգիաների փոխանցմանը:

Հայաստանի դեպի ծով ելք չունենալու հանգամանքը հանգեցնում է բնապահպանական տեսակետից նախընտրելի տեխնոլոգիաների փոխանցման լրացուցիչ դժվարությունների ու խոչընդոտների՝ զգալիորեն նվազեցնելով դրանց հասանելիությունը, էկոհամակարգային մոտեցմամբ կլիմայի փոփոխությանը հարմարվելու (ադապտացվելու) տարածաշրջանային համագործակցության հնարավորությունները:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ.-ի սեպտեմբերի 10-ի N42 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի հետագա իրականացման Հայաստանի դիրքորոշումը սահմանող «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններ/ներդրում» (INDC) փաստաթուղթը, որում հիմնավորված է, որ Հայաստանի Հանրապետության աշխարհագրական տեղադիրքը (դեպի ծով ելք չունեցող, խոցելի էկոհամակարգերով լեռնային երկիր) պահանջում է նախապատվություն տալ կլիմայի փոփոխությանը հարմարվելու (ադապտացիայի) ուղղությանը:

Այդ փաստաթուղթը սահմանված կարգով ներկայացվել է Փարիզում 2015թ. դեկտեմբերին կայացած Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի Կողմ երկրների 21-րդ համաժողովին ու հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պաշտոնական դիրքորոշումը նշված համաժողովում ընդունված «Փարիզյան համաձայնագրին» մասնակցության համար:

Կլիմայի փոփոխության մասին կոնվենցիայով ընթանում է մի գործընթաց, որը նպատակաուղղված է միջազգային ավիացիայից ու ծովային նավատորմից ջերմոցային գազերի արտանետումների կարգավորմանն ու կրճատմանը: Այդ նպատակով նախատեսվում է մտցնել այսպես կոչված "ածխածնային բնավճար" (Carbon taxing), ինչը բնականաբար կանդրադառնա բեռնափոխադրումների գնի վրա, որի բարձրացման դեպքում էլ ավելի կդժվարանա տեխնոլոգիաների փոխանցման գործընթացն ու դրա հետ կապված կլիմայի փոփոխության մեղմման ու հարմարվողական միջոցառումների իրականացումը:

Ելնելով վերոգրյալից ձեռնարկվում են քայլեր դեպի ծով ելք չունենալու Հայաստանի աշխարհագրական դիրքից բխող կլիմայի փոփոխությամբ պայմանավորված խնդիրների լուծման ուղղություններն ու գործողությունները Հայաստանի տնտեսական ու սոցիալական ճյուղային (սեկտորալ) քաղաքականություններում, ինչպես նաև Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի Կողմ երկրների 21-րդ համաժողովին ընդունած որոշումների կատարմանը նպատակաուղղված գործողություններում ներառելու նպատակով:

6. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման ռազմավարություն և նրա իրականացմանն ուղղված համալիր միջոցառումներ

Հայաստանի Հանրապետության տնտեսական ռազմավարության հիմնական ուղղությունները և իրականացման միջոցները հանգամանորեն արտացոլված են «Հայաստանի Հանրապետության 2014-2024թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր» վերտառությամբ համալիր փաստաթղթում, որն ընդունվել է ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 -Ն որոշմամբ: Թե բովանդակային և թե ժամանակագրական ընդգրկմամբ Ծրագիրը համահունչ է Կայուն զարգացման նպատակների 2030 թվական օրակարգ (2030 Agenda for sustainable Development aims) փաստաթղթին, Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների վերաբերյալ Վիեննայի հռչակագրին և 2014-2024թթ. Գործողությունների ծրագրին, վերջինում նախանշված նպատակներին, խնդիրներին և գերակա ուղղություններին: Հայաստանի Հանրապետության 2014-2024թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը բաղկացած է 733 կետերից և ներառում է մանրակրկիտ փաստական, թվական տվյալներ, 27 աղյուսակներ և գծապատկերներ: Փաստաթուղթը սահմանում է Հայաստանի Հանրապետության ճանապարհային հաղորդակցության և ճանապարհաշինության, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների, էներգետիկ համակարգի, բնապահպանական և միջավայրի պաշտպանության, հանքարդյունաբերության, աղքատության հաղթահարման և կայուն զարգացման, տարածաշրջանային և միջազգային տնտեսական ինտեգրման և համագործակցության ոլորտների ռազմավարությունները և դրանց իրականացմանն ուղղված միջոցառումները:

7. Ամփոփում և եզրակացություններ

Վիեննայի 2014-2024թթ. Գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումները կարևոր նշանակություն ունեն ՀՀ տնտեսական զարգացման համար և լիովին համահունչ են ՀՀ արտաքին տնտեսական քաղաքականության առաջնահերթություններին: Գործողությունների ծրագրի իրագործմանն ուղղված

Ազգային ծրագրի մշակումը նպատակ ունի տեղայնացնել ԳԾ-ի միջոցառումները՝ հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության առանձնահատկությունները: Ազգային ծրագրի մշակումը և դրա հետագա կատարումը ընդգծում են Հայաստանի կողմից ցուցաբերվող հատուկ ուշադրությունը դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների հիմնախնդիրների նկատմամբ: Ազգային ծրագրի հետևողական իրագործումը և դրանով իսկ Վիեննայի գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացումը կհանգեցնեն այս ոլորտում միջազգային հարթակներում ընթացող գործընթացներում Հայաստանի էլ ավելի ակտիվ ներգրավմանը և հեղինակության հաստատմանը և ամրապնդմանը, ինչն իր հերթին նախադրյաներ կստեղծի տասնամյակային երրորդ համաժողովը Երևանում անցկացնելու հայտ ներկայացնելու հավակնոտ նպատակին հասնելու համար:

Սույն Ազգային ծրագրին կից սահմանվում են դրա իրագործման, ինչպես նաև Ծրագրի նպատակներից բխող այլ միջոցառումների իրագործման ժամանակացույցը:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թ.
փետրվարի 4-ի նիստի N 4
արձանագրային որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԴԵՊԻ ԾՈՎ ԵԼՔ ՉՈՒՆԵՑՈՂ ԶԱՐԳԱՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻԵՆՆԱՅԻ 2014-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԴՐԱ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ

NN ը/կ	**Միջոցառման անվանումը**	**Պատասխանատու կատարողներ (համակատարողներ)**	**Կատարման ժամկետ**
1.	Միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունների /Նյու Յորք, Ժնև, Վիեննա/ գործունեության ակտիվացում՝ ապահովելով նրանց ներգրավվածությունը Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների (LLDC) ձևաչափում տեղի ունեցող բազմակողմ գործընթացներին, մասնավորապես՝ - ակտիվ մասնակցություն հարցին առնչվող աշխատանքային խմբերի հանդիպումներին, թեմատիկ քննարկումներին՝ ներկայացնելով ՀՀ դիրքորոշումները, առկա խնդիրները, - հանդես գալ ոլորտին առնչվող նախաձեռնություններով ու	ՀՀ ԱԳՆ	2016-2024թթ. շարունակական

	առաջարկություններով, այդ թվում նաև բանաձևերի հեղինակումներով, - Միավորված ազգերի կազմակերպության նյույորքյան և ժնևյան գրասենյակներում գործող LLDC-ների խմբերում նախագահության ստանձնում, - Միավորված ազգերի կազմակերպության նյույորքյան կենտրոնակայանում, Ժնևի և Վիեննայի գրասենյակներում Ազգային ծրագրից բխող միջոցառումների իրականացում, - ակտիվ համագործակցություն այլ երկրների և ոլորտի դերակատարների հետ՝ հանդես գալով ընդհանուր նախաձեռնություններով, - աջակցություն այլ երկրների՝ ՀՀ շահերից բխող առաջարկություններին ու բանաձևերին, մասնակցություն դրանց մշակմանը, քննարկմանը և համահեղինակմանը, - ոլորտին առնչվող ձևաչափերում ՀՀ շահերին հակասող հնարավոր քայլերի կանխում և չեզոքացում - օտարերկրյա պետություններում իրականացվող, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների շրջանակներում ընթացող ֆորումների, համաժողովների շրջանակներում թեմատիկ միջոցառումների կազմակերպում, - Հայաստանում ոլորտային թեմատիկ քննարկումների, համաժողովների կազմակերպում - Ոլորտին առնչվող ձևաչափերում ազգային կամավոր զեկույցների ներկայացում		2016-2024թթ. շարունակական
2.	Իրականացնել աշխատանքներ Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների հաջորդ տասնամյակային համաժողովը Երևանում անցկացնելու ուղղությամբ	ՀՀ ԱԳՆ շահագրգիռ գերատեսչություններ	2016-2024թթ. շարունակական
3.	Ոլորտին առնչվող միջազգային պարտավորությունների և	ՀՀ ԱԳՆ	2016-2024թթ.

	հանձնառությունների կատարման ապահովում: ՀՀ անդամակցությամբ միջազգային փաստաթղթերի կատարում: Ոլորտին առնչվող այլ միջազգային իրավական փաստաթղթերին, կոնվենցիաներին ու բազմակողմ համաձայնագրերին ՀՀ անդամակցության դիտարկում: Այդ նպատակով միջազգային պրակտիկայի ուսումնասիրում, համապատասխան միջազգային փաստաթղթերի ցանկի պատրաստում:	շահագրգիռ գերատեսչություններ	շարունակական
4.	Համապատասխան աշխատանքների և համագործակցության ակտիվացում՝ միջազգային այն կազմակերպությունների, կառույցների և ծրագրերի /մասնավորապես, ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողով (UN ESCAP), ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովի Մշտական քարտուղարություն (TRACECA), Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպություն (BSEC), «Հյուսիս-Հարավ միջազգային ճանապարհային միջանցք» ծրագիր (INSTC) և այլն/ հետ, որոնց գործունեությունն ընդգրկում է LLDC-ների հետ կապված հարցերը, կամ այս կամ այն չափով առնչվում դրանց՝ ներառելով անարգել բեռնափոխադրումները, տարանցիկ առևտուրը, շրջափակումների անթույլատրելիությունը և այլն:	ՀՀ ԱԳՆ	2016-2024թթ. շարունակական
5.	Ակտիվ համագործակցություն դոնոր երկրների, ֆինանսական կազմակերպությունների ու կառույցների հետ (Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ, Առևտրի համաշխարհային կազմակերպություն), ինչպես նաև միջազգային (տարածաշրջանային) տնտեսական կառույցների և միությունների հետ՝ կոնկրետ թիրախային ծրագրերի համար ֆինանսական աջակցություն ապահովելու նպատակով	ՀՀ ԱԳՆ ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն	2016-2024թթ. շարունակական
6.	Համագործակցություն ֆինանսական կազմակերպությունների և	ՀՀ ԱԳՆ	2016-2024թթ.

	կառույցների հետ ՀՀ տնտեսական զարգացմանը խոչընդոտող գործոնների ուսումնասիրման և գնահատման հարցերում	շահագրգիռ գերատեսչություններ	շարունակական
7.	Ասիական ենթակառուցվածքային ներդրումային բանկին Հայաստանի Հանրապետության անդամակցություն	ՀՀ ԱԳՆ ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն	2016-2017թթ.
8.	Եվրասիական տնտեսական միության շրջանակներում իրականացվող տնտեսական քաղաքականության շրջանակներում թիրախային ծրագրերի առաջարկում	ՀՀ ԱԳՆ ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն	2016-2024թթ. շարունակական
9.	Եվրոպական միության հետ տնտեսական համագործակցության շրջանակներում միջոցառումների իրականացում, մասնավորապես՝ - Հայաստանի Հանրապետության պարտավորություններից բխող տնտեսական միջոցառումների իրականացում, - Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրից բխող տնտեսական միջոցառումների իրականացում, - Եվրոպական միության կողմից տրամադրվող աջակցության և Եվրոպական միության գործիքակազմի շրջանակներում նախատեսված տնտեսական ծրագրերի իրականացում, - Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից Եվրոպական միության հետ համագործակցության	ՀՀ ԱԳՆ ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն	2016-2024թթ. շարունակական

	շրջանակներում բարեփոխումներին վերաբերող		
10.	Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների վերաբերյալ Վիեննայի 2014-2024թթ. Գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ազգային ծրագրի մշակման կազմակերպչական աշխատանքների իրականացումն ապահովելու նպատակով 2015թ. ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի գործունեության շարունակականության ապահովում՝ սույն Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքի քննարկման և ըստ անհրաժեշտության նոր միջոցառումներով համալրման նպատակով:	ՀՀ ԱԳՆ	2016-2024թթ. շարունակական
11.	Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների հետ երկկողմ համագործակցության ակտիվացում՝ փորձի փոխանակման և համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով:	ՀՀ ԱԳՆ	2016-2024թթ. շարունակական
12.	Դեպի ծով ելք չունեցող զարգացած երկրների հետ երկկողմ համագործակցության ակտիվացում՝ փորձի փոխանակման և աջակցության ծրագրերից օգտվելու նպատակով:	ՀՀ ԱԳՆ	2016-2024թթ. շարունակական
13.	Հայաստանի Հանրապետությանը սահմանակից տարանցման երկրների՝ Իրանի Իսլամական Հանրապետության և Վրաստանի հետ համապատասխան աշխատանքների և համագործակցության ակտիվացում՝ նկատի ունենալով նշված երկրների բացառիկ դերը տարանցիկ բեռնա- և ուղևորափոխադրումների հարցում:	ՀՀ ԱԳՆ	2016-2024թթ. շարունակական
14.	Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների տասնամյակային երրորդ համաժողովը Հայաստանում անցկացնելուն ուղղված նախապատրաստական աշխատանքներ	ՀՀ ԱԳՆ	Սկսած 2020թ.
15.	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագրի իրականացում	ՀՀ տրանսպորտի և կապի	Մինչև 2020թ.

		նախարարություն	
16.	«Հայաստանի Հարավային երկաթուղի» ծրագիր	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	Մինչև 2026թ.
17.	Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման մայրուղու վերականգնման ծրագրի իրականացում	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	մինչև 2019թ. ավարտ
18.	Նոր ջերմային համակցված շոգեգազային ցիկլով էներգատեղակայանքի կառուցում, 220 ՄՎտ հզորությամբ	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության	2017թ.
19.	Իրան-Հայաստան 400 կՎ լարման երկշղթա էլեկտրահաղորդման օդային գծի և 400 կՎ «Նորավան» ենթակայանի կառուցում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության	2018թ.
20.	Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցում:	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության	2018թ.
21.	Փոքր ՀԷԿ-երի կառուցում գումարային մինչև 150 ՄՎտ հզորությամբ, մինչև 2020-2021թ.՝ հաշվի առնելով տեսակարար ներդրումների աճը և բնապահպանական պահանջների ապահովումը (մասնավոր ներդրումներ):	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության	2021-2022թթ.
22.	Միջին հզորության ՀԷԿ-երի (Լոռիբերդ-66 ՄՎտ և Շնող-70 ՄՎտ) զարգացում և շահագործման հանձնում 2021-2022թ. (մասնավոր ներդրումներ) ինչը կավելացնի տարեկան արտադրանքը շուրջ 500 մլն. կՎտժ:	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության	2021-2022թթ.
23.	30 ՄՎտ երկրաջերմային էլեկտրական կայանի կառուցում և շահագործման հանձնում 2023-2024թ.՝ SREP ծրագրի աջակցությամբ: (մեկնարկ 2018թ), ծրագիրն իրատեսական է եթե 2015թ.-ին հորատման արդյունքում կհաստատվի երկրաջերմային	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության	2023-2024թթ.

	աղբյուրի պոտենցիալը, Հողամաէլեկտրակայանների կառուցում 200 ՄՎտ գումարային հզորությամբ:		
24.	Հայկական ԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգում մինչև 2026թ., միաժամանակ շարունակելով անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը դոնոր երկրների աջակցությամբ՝ ԱԷՄԳ-ի համակարգմամբ:	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության	Մինչև 2026թ.
25.	Նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրի իրականացում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության	Մինչև 2027թ.
26.	Միջազգային առևտրի խթանման և առևտրի ազատականացմանն ուղղված միջոցառումների ծրագրերի իրականացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016-2024թթ. շարունակական
27.	Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018թթ. Ռազմավարության իրականացում Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրերի իրականացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016-2024թթ. շարունակական
28.	Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016-2024թթ. շարունակական
29.	Տնտեսական զարգացման քաղաքականության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի իրականացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016-2024թթ. շարունակական
30.	Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման քաղաքականության շրջանակներում ոլորտի զարգացման ռազմավարության իրականացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016-2024թթ. շարունակական .
31.	«Բաց երկնքի» քաղաքականության իրականացում՝ ցածր բյուջետային ավիափոխադրողների ներգրավմամբ, երկաթուղային ուղևորափոխադրումների շուկայի մրցակցային	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016-2024թթ. շարունակական

	բնույթի ապահովում		
32.	Զբոսաշրջության զարգացման հայեցակարգի և Զբոսաշրջությանն աջակցության ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016-2024թթ. շարունակական
33.	Տեխնոլոգիական զարգացման քաղաքականության շրջանակներում Ինովացիոն գործունեությանն աջակցության ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016-2024թթ. շարունակական
34.	Ներդրումային քաղաքականության շրջանակներում ուղղակի օտարերկրյա ներդրումների ներգրավմանն ուղղված միջոցառումների իրականացում, ազատ տնտեսական գոտիների ստեղծման խթանում, «ներդրումների խթանման և ներդրումային քաղաքականության ինստիտուցիոնալ համակարգի հզորացում Հայաստանում» թվինինգային ծրագրի իրականացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016-2024թթ. շարունակական
35.	Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության իրականացում Արդյունաբերության ճյուղերի ոլորտային ռազմավարությունների գործողությունների ծրագրերի իրականացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016-2024թթ. շարունակական
36.	Հայաստանի աշխարհագրական դիրքից բխող կլիմայի փոփոխությամբ պայմանավորված խնդիրների լուծման ուղղություններն ու գործողությունները ներառել Հայաստանի տնտեսական ու սոցիալական ճյուղային (սեկտորալ) քաղաքականություններում, ինչպես նաև Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի Կողմ երկրների 21-րդ համաժողովին ընդունած որոշումների կատարմանը նպատակաուղղված գործողություններում	ՀՀ բնապահպանության նախարարություն շահագրգիռ գերատեսչություններ	2016-2020թթ. շարունակական